ԿԱՐԲԻԻՑ - ԲԱՅԱԶԵՏ

«Թե մինչև ուխտի գնալդ մեր կողմերով անցնես, մտիր, խնդրում եմ, բուժկետ»:- Հեռախոսով այս առաջարկն արեց Կարբի գյուղի բժիշկ Սաբրո Ասատրյանը, հավելելով նաև, թե՝ «Գյուղապետ Ֆրունզիկ Նազարեթյանն էլ է խնդրում, որ գաս»:

Բժշկի հետ մենք մտերիմներ ենք, բայց այս զանգը մի փոքր տարօրինակ թվաց ինձ. գուցե իմ առողջական վիճա՞կն է ուզում ստուգել՝ իմանալով Արևմտյան Հայաստան այցելությանս օրերին իմ հուզաշխարհը կառավարելուն անկարող լինե՞լս:

- Ես քեզ տեղը տեղին պիտի ստուգեմ,-ասաց բժիշկը և, իմ «չեմ ու չում»-ին բանի տեղ չդնելով՝ անցավ իր գործին:

Եկան, հավաքվեցին բուժկետի մյուս աշխատողները՝ ամեն մեկն իր գերդաստանի արմատներից սկսեց խոսել, վկայել պապերի քաղաքը կամ գյուղը, որտեղից մի վկայություն, մի մասունք էր ուզում, որ բերեի: Հետո՝ հյուրասիրություն, բարի մաղթանքի կենացներ…

Վերջում էլ բոլորը դուրս եկան ինձ ճանապարհելու: Արծրունը թե՝ «Մի հատ մեզ նկարի, նկարը հետդ տար»:

Ահա այսպիսի մտերմիկ ճանապարհել այդ բարի, այդ ազնիվ մարդկանց կողմից:

Կարբիի գյուղապետը հետո եկավ՝ դասեր ուներ դպրոցում: Նրա հետաքրքրությունը Բայազետն էր, ուր դեռ չի հասցրել լինել, բայց ծրագիր ունի աշակերտներով գնալ. այստեղ՝ դպրոցում, սկսած իր պատմությունները տեղում շարունակել, անցյալն ու ներկան շաղկապել այդ ջահելների ուխտով:

Ֆրունզիկի հետ մենք երկար զրուցեցինք՝ Բայազետի մասին մեզանից ով ինչ գիտեր «հանեց-դրեց սեղանին»: Հային բնորոշ թախիծը եկավ-ընկերացավ մեզ, ու հրաժեշտին Ֆրունզիկը ասաց.

- Հովիկ ջան, վերադարձիդ մի խեր խաբար բեր էդ հրաշք երկրից:

Շարունակելի